ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

25.10.2022թ. կնքված N «ՏԿԵՆ-ՄԱԾՁԲ-2022/33Հ» հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք. Երևան « 14 » « 03 » 2023թ.

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Ա. Երիցյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Արմստրոյ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Առաքելյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, միասին այսուհետև՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, ՀՀ կառավարության 2023թ-ի փետրվարի 16-ի N 211-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Կողմերի միջև 25.10.2022թ. կնքված N «ՏԿԵՆ-ՄԱԾՁԲ-2022/33Հ» պետական գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 կետը և հաշվի առնելով այն, որ Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման համար նախատեսվել են ֆինանսական միջոցներ, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Կողմերը որոշեցին.

1.1 Պայմանագրի 4.1 կետը լրացնել նոր պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«2023 թվականին Պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 8 200 190 (Ութ միլիոն երկու հարյուր հազար հարյուր իննսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:»:

1.2 Հաստատել 2023 թվականի վճարման ժամանակացույցը՝ համաձայն հավելված 1-ի:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

Համաձայնագրի պայմանները կիրառվում եմ 2023 թվականի հունվարի 1-ից կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը կնքվում է հայերեն լեզվով երկու օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ տարածքային կառավարման և	«Արմստրոյ» ՍՊԸ
ենթակառուցվածքների նախարարություն	ՀՀ, ք. Սիսիան, Ա. Մանուկյան 15
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,	Ակբա բանկ ԲԲԸ
ՀՀ կենտրոնական գանձապետարան	ՀՀ 220300121294000
ՀՀ 900011002632	ՀՎՀՀ 09809552
ՀՎՀՀ 02815457	Տնօրեն
գլխավոր քարտուղար	Ա. Առաքելյան
Ա. Երիցյան	
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հաստատված է
N «ՏԿԵՆ-ՄԱԾՁԲ-2022/33Հ» գնման պայմանագրի
«14» «03» 2023 թ. կնքված
թիվ 2 Համաձայնագրով
Հավելված թիվ 1

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ հազ. դրամ

Հրավերով նախատես-ված չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Գնման ենթակա ծառայությունների անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը տարվա
1	98111140/1	**Հեղինակային հսկողության ծառայություններ**	---	---	---	1 230 029	1 230 029	1 230 029	8 200 190	8 200 190	8 200 190	8 200 190	8 200 190	8 200 190	**8 200 190**

***Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900011002632
ՀՎՀՀ 02815457
գլխավոր քարտուղար
Ա. Երիցյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Արմստրոյ» ՍՊԸ
ՀՀ, ք. Սիսիան, Ա. Մանուկյան 15
Ակբա բանկ ԲԲԸ
ՀՀ 220300121294000
ՀՎՀՀ 09809552
Տնօրեն
Ա. Առաքելյան

/ստորագրություն/
Կ.Տ